


ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Դիվիսա Էյ Էմ» ՓԲԸ
Գործադիր տնօրենի կողմից
Հրաման թիվ Վ06-15
“16” նոյեմբերի 2015 թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույն կանոնակարգով կարգավորվում են «Դիվիսա Էյ Էմ» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունը վերստուգելու նպատակով անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության համար Ընկերության կողմից կազմակերպվող հրապարակային մրցույթների անցկացման հետ կապված հարաբերությունները:
- 1.2. Սույն կանոնակարգում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.
- հրապարակային մրցույթ՝** Ընկերության կողմից բաց մրցույթի ձևով հրապարակային սակարկության անցկացման միջոցով համապատասխան պայմանագրի կնքման գործընթաց, որի ընթացքում պայմանագիրը կնքվում է հաղթող ճանաչված այն մասնակցի հետ, որը մրցութային հանձնաժողովի եզրակացությամբ համապատասխանում է սույն կանոնակարգով սահմանված չափանիշներին և առաջարկել է հրապարակային մրցույթի լավագույն պայմաններ.
- մրցութային հանձնաժողով՝** Ընկերության տնօրենի հրամանով հաստատված հանձնաժողով.
- հրապարակային մրցույթի մասնակիցներ՝** հրապարակային մրցույթի միջոցով համապատասխան պայմանագիր կնքելու ցանկություն հայտնած անձինք: Հրապարակային մրցույթի մասնակիցներ կարող են լինել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական անձ հանդիսացող ցանկացած կազմակերպություններ.
- հրապարակային մրցույթի պայմաններ՝** Ընկերության կողմից իրականացվող հրապարակային մրցույթով կնքվող պայմանագրի էական պայմանների համալիր.
- մրցույթի արդյունքների մասին արձանագրություն՝** մրցույթի արդյունքների հիման վրա Ընկերության և մրցութային հաղթող ճանաչված մասնակցի միջև ստորագրված փաստաթուղթ, որի ստորագրման պահից մրցութային հաղթող ճանաչված մասնակիցը ձեռք է բերում/ստանձնում համապատասխան պայմանագիր կնքելու իրավունք/ պարտավորություն.
- մրցութային հանձնաժողովի հատուկ նիստ՝** մրցութային հանձնաժողովի հրապարակային ծանուցմամբ սահմանված օրը և ժամին գումարված մրցույթի հայտերի բացման նիստ: Մրցույթի հայտերը բացելու նիստի օրը կարող է նշանակվել մրցույթի հայտերն ընդունելու վերջին օրվանից առնվազն երեք օր հետո.
- մրցույթի հայտերի ամփոփման նիստ՝** մրցույթի հաղթողին որոշելու համար գումարվող մրցութային հանձնաժողովի նիստ, որի ընթացքում մրցութային հանձնաժողովը քվեարկության միջոցով ձևավորված եզրակացության հիման վրա որոշում է կայացնում ստորագրել մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը կամ որոշում է կայացնում մրցույթը չկայացած համարել:

2. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

	<p>Հրապարակային մրցույթների կազմակերպման և անցկացման կարգ</p>	<p>AD TO RL 1115 01</p>
---	---	-------------------------

- 2.1. Հրապարակային մրցույթին մասնակցելու մասին Ընկերության հրապարակված առաջարկը (հայտարարությունը) ուղղված է բոլոր ցանկացողներին, բացառությամբ սույն կանոնակարգի 2.2-րդ կետում թվարկված անձանցից:
- 2.2. Մրցութային հանձնաժողովը մինչև մրցութի հաղթողին ճանաչելու օրը անհրաժեշտության դեպքում կարող է պահանջել հրապարակային մրցութի մասնակիցներից ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր: Նշված դրույթը պարտադիր նշվում է հրապարակային ծանուցման մեջ:
- 2.3. Հրապարակային մրցույթին մասնակցելու համար ցանկություն հայտնաձ մասնակիցները մինչև հայտերի բացման օրը կարող են հետ վերցնել մրցութի հայտերը (հրաժարվել մրցույթին մասնակցելուց):

3. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԿՆՔԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 3.1. Սույն կանոնակարգով նախատեսված մրցութի արդյունքների մասին արձանագրությունը ստորագրելու պահից հրապարակային մրցութի հաղթողը ձեռք է բերում համապատասխան պայմանագիր կնքելու իրավունք:
- 3.2. Հրապարակային մրցութում հաղթողի հետ համապատասխան պայմանագիր կնքելիս պայմանագրի էական պայմանները պետք է համապատասխանեն հրապարակային մրցութի մասին հրապարակային ծանուցմամբ սահմանված պայմաններին և հայտերի քննարկման ժամանակ հարցումների և դրանց պատասխանների հիման վրա հրապարակային մրցութի հաղթողի հետ ձեռք բերված համաձայնություններին:

4. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

- 4.1. Ընկերության տնօրենի կողմից հաստատված հրապարակային մրցութի անցկացման մասին հայտարարությունը (այսուհետ՝ հրապարակային ծանուցումը) հրապարակում է նվազագույնը 1000 (հազար) տպաքանակ ունեցող զանգվածային լրատվության միջոցներով (պարբերական մամուլի և/կամ Ընկերության ինտերնետային տնային էջում և էլեկտրոնային այլ միջոցներով՝ հրապարակային մրցութը սկսվելուց (մրցութի հայտերի ընդունման վերջին օրվանից) առնվազը 30 (երեսուն) օր առաջ:
- 4.2. Հրապարակային ծանուցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝
 - հրապարակային մրցութի կազմակերպչի անունը (անվանումը).
 - հրապարակային մրցութի կազմակերպման վայրը (հասցեն).
 - հրապարակային մրցութի հայտերի ընդունման ժամանակահատվածը՝ նշելով ժամերն ըստ օրերի.
 - հրապարակային մրցութի ձևը և դրա անցկացման կարգը.
 - հրապարակային մրցութին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը.
 - հրապարակային մրցութին մասնակցելու նախավճարի չափը, ինչպես նաև վճարելու կարգը և ժամկետները.
 - հրապարակային մրցութի հաղթողին որոշելու կարգը.
 - մրցութում ծածկագրեր կիրառելու կարգը.
 - հրապարակային մրցութի հայտերը բացելու, ինչպես նաև մրցութի հայտերն ամփոփելու նիստերի օրը և ժամը.

- հրապարակային մրցույթի կանոնակարգին ծանոթանալու վայրը և կանոնակարգի պատճենը տրամադրելու կարգը.
- մրցութային հանձնաժողովի հայեցողությամբ՝ այլ տեղեկություններ:


- 4.3. Հրապարակային ծանուցմամբ, որպես հրապարակային մրցույթում հաղթողին որոշելու կարգ, սահմանվում է, որ մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որը մրցութային հանձնաժողովի եզրակացությամբ ներկայացրել է հրապարակային մրցույթի լավագույն պայմաններ: Առանձին դեպքերում հրապարակային մրցույթի ծանուցմամբ կարող է նկարագրվել հրապարակային մրցույթի հաղթողին որոշելու հատուկ արարողակարգ:
- 4.4. Մրցութային հանձնաժողովը հրապարակային մրցույթի հայտերի բացման օրը մրցույթի մասնակիցների ներկայացրած հայտերի ուսումնասիրությունից հետո կարող է փոփոխել հրապարակային ծանուցմամբ նախատեսված հրապարակային մրցույթի հայտերի ամփոփման օրը և ժամը՝ այդ մասին ծանուցելով մասնակիցներին:

5. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՄԲ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

- 5.1. Հրապարակային մրցույթի պայմաններում, ինչպես նաև հրապարակային մրցույթի հայտերը բացելու օրվա և ժամի վերաբերյալ փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում Ընկերությունը պարտավոր է մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ անհապաղ կատարել համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ (այսուհետ՝ հրապարակային ծանուցման փոփոխություն): Սույն կետում նշված հրապարակային ծանուցման փոփոխությունները կատարվում են այն ձևով, ինչպես կատարվել էր մրցույթի մասին հրապարակային ծանուցումը:
- 5.2. Հրապարակային ծանուցման փոփոխությունները կարող են կատարվել մինչև մրցույթի հայտերի բացման օրը: Հրապարակային ծանուցման մեջ փոփոխություններ կատարելու դեպքում մասնակիցներն իրավունք ունեն սույն կանոնակարգով սահմանված կարգով մրցութային հայտերում կատարել լրացուցիչ փոփոխություններ: Ընկերությունը հրապարակային ծանուցման փոփոխության դեպքում չի կրում մասնակիցների կրած իրական վնասների ռիսկը: Սույն դրույթը պարտադիր նշվում է հրապարակային ծանուցման մեջ:
- 5.3. Հրապարակային ծանուցման փոփոխությամբ թույլատրվում է կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում մրցույթի պայմանների մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները:

6. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

- 6.1. Ընկերությունը ստեղծում է առնվազն երեք անձից բաղկացած մրցութային հանձնաժողով:
- 6.2. Մրցութային հանձնաժողովի անդամ չեն կարող լինել օրենքով սահմանված կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք:
- 6.3. Մրցութային հանձնաժողովը հաստատում է մրցույթի մասին հրապարակային ծանուցման տեքստը, բացում և գնահատում է մրցույթի հայտերը, ինչպես նաև որոշում է մրցույթի հաղթողին, իրականացնում օրենքով և սույն կանոնակարգով նախատեսված այլ գործողություններ:
- 6.4. Մրցութային հանձնաժողովը պատասխանատու է հրապարակային մրցույթի ընթացքում մրցույթի անցկացման օրինականության ապահովման, հրապարակային մրցույթի կազմակերպման, ինչպես նաև նիստերի արձանագրությունների և այլ փաստաթղթերի պահպանման համար:

	<p>Հրապարակային մրցույթների կազմակերպման և անցկացման կարգ</p>	<p>AD TO RL 1115 01</p>
---	---	-------------------------

- 6.5. Մրցութային հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է մրցութային հանձնաժողովի անդամների 2/3-ը:
- 6.6. Մրցութային հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկության արդյունքներով: Մրցութային հանձնաժողովի որոշումները ընդունվում են մրցութային հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, ձայների հավասարության դեպքում մրցութային հանձնաժողովի նախագահողի ձայնը որոշիչ է:

7. ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

- 7.1. Հրապարակային մրցույթին մասնակցել ցանկացող անձինք, մրցույթի մասին հրապարակային ծանուցման պահանջներին համապատասխան, առձեռն կամ փոստային ծառայության միջոցով Ընկերություն են ներկայացնում մրցույթի հայտեր:
- 7.2. Հրապարակային մրցույթի հայտով ներկայացվող տեղեկությունները և փաստաթղթերը ներկայացվում են երկու փակ և սոսնձված ծրարներում, որոնց վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «կրկնօրինակ» բառերը:
- 7.3. Ծրարների վրա կատարվում են հետևյալ գրառումները.
 - մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված մրցույթի հայտի ներկայացման վայրը (հասցեն).
 - մրցույթի ծածկագիրը.
 - «չբացել մինչև մրցույթի հայտերի բացման նիստը» բառերը.
 - մասնակցի անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը կամ կապի այլ միջոցները:
- 7.4. Մրցույթի հայտերը գրանցվում են առանձին գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության նշելով գրանցման համարը, տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը, մասնակցի անվանումը, մրցույթի հայտի փոփոխության կամ հայտերի հետվերցման մասին: Նշված գրանցամատյանի հիման վրա կազմվում է ամփոփ տեղեկանք, որը մրցութային հանձնաժողովի հատուկ նիստում ներկայացվում է մրցութային հանձնաժողովին:
- 7.5. Ընկերությունը մրցույթի մասնակիցներին տալիս է տեղեկանք՝ մրցույթի հայտն ընդունելու մասին:
- 7.6. ՀՀ Հրապարակային սակարկությունների մասին օրենքի և սույն կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող մրցույթի հայտերը, ինչպես նաև մրցույթի հայտեր ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո տրված մրցույթի հայտերն առանց բացվելու մերժվում են և վերադարձվում են ներկայացնողին:
- 7.7. Մրցույթի մասնակիցները, մինչև մրցույթի հայտերը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտը, կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտերը:
- 7.8. Մրցույթի հայտի փոփոխությունը կատարվում է մրցույթի հայտ ներկայացնելու համար նախատեսված կարգով՝ ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը:

8. ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

- 8.1. Հրապարակային մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվում են մրցութային հանձնաժողովի հատուկ նիստերին՝ մրցույթի մասին հրապարակային ծանուցմամբ նախատեսված օրերին և ժամերին:
- 8.2. Մրցույթի հայտերի բացման նիստում հրապարակվում են՝
- մրցույթի հայտը ներկայացրած յուրաքանչյուր անձի անվանումը.
 - մրցույթի հայտեր ներկայացնելու ժամկետների և հայտերի ծրարների վրա կատարված գրառումների համապատասխանությունը սույն կանոնակարգի և մրցույթի մասին հրապարակային ծանուցման պահանջներին.
 - ամփոփ տվյալներ՝ մրցույթի հայտերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:
- 8.3. Մրցույթի առաջարկների ամփոփման գործընթացը իրականացվում է մրցութային հանձնաժողովի կողմից որը պետք է ստորագրի համեմատական աղյուսակի տակ կամ ամփոփ տեղեկանքի վրա:
- 8.4. Մրցութային հանձնաժողովը սույն կանոնակարգի 8.3-րդ կետում նշված տեղեկանքի հիման վրա ընտրում է առաջարկված մրցութային պայմաններից լավագույնը: Լավագույն մրցութային պայմանները պարունակող հայտերի քննարկման ժամանակ մրցույթի ամփոփման օրը որոշվում է մրցույթի հաղթողի անունը (անվանումը):
- 8.5. Մրցույթի մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել մրցույթի հայտերի բացման, ինչպես նաև մրցույթի հայտերի ամփոփման նիստերին:
- 8.6. Մրցույթի հայտերն ամփոփելու օրը մրցութային հանձնաժողովը կազմում է մրցույթի արդյունքների մասին արձանագրություն, որտեղ նշվում են՝
- մրցույթի հայտերի բացման, ինչպես նաև մրցույթի հայտերի ամփոփման վայրը, ամսաթիվը և ժամը, ինչպես նաև մրցութային հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.
 - մրցույթի մասնակիցների անունները (անվանումները) և գտնվելու (բնակության) հասցեները.
 - մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումների և դրանց պատասխանների մասին տեղեկություններ.
 - մրցութային հաղթողի անունը (անվանումը).
 - այն նախապատվելիության չափանիշները, որոնց հիման վրա մրցույթի մասնակիցներից մեկը հաղթող է ճանաչվել.
 - այլ անհրաժեշտ տեղեկություններ:
- 8.7. Մրցութային հանձնաժողովի անդամի հատուկ կարծիքը ներկայացվում է գրավոր, որը կցվում է արձանագրությանը և համարվում դրա անբաժանելի մասը:
- 8.8. Մրցույթի մասնակիցները կարող են ծանոթանալ մրցույթի նիստերի արձանագրություններին:
- 8.9. Մրցույթի արդյունքներն ամփոփելու և մրցութային հաղթողին ճանաչելու օրը կազմակերպիչը և մրցույթի հաղթող ճանաչված մասնակիցը ստորագրում են մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը:

9. ԶԿԱՅԱՑԱԾ ԵՎ ԱՆՎԱԿԵՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ

- 9.1. Մրցութային հանձնաժողովը չկայացած (անվավեր) է համարում մրցութը, եթե՝
- ոչ մի հայտ չի ներկայացվել.
 - ներկայացված հայտերից ոչ մեկը չի համապատասխանում մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված պահանջներին.
 - արտակարգ իրավիճակների պատճառով անհնար է դառնում մրցութով նախատեսված ծառայությունների մատուցումը: